ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության եւ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երեւանյան գրասենյակի միջև համագործակցության և աջակցության մասին

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) եւ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ)՝ ի դեմս ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ), այսուհետ՝ «Կողմեր»,

ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածից, որն իր 1-ին և 2-րդ պարբերություններում սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք» և «կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը եւ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը»,

նկատի ունենալով Խորհրդատվական կոմիտեի կողմից «Մարդու իրավունքների կրթության եւ վերապատրաստման մասին Միավորված ազգերի կազմակերպության հռչակագրի» մշակման գործընթացը,

վերահաստատելով և հիմնվելով Մարդու շրջակա միջավայրի հարցերին նվիրված Միավորված ազգերի համագումարի հռչակագրի և Շրջակա միջավայրի եւ զարգացման Ռիոյի հռչակագրի վրա,

ողջունելով Միավորված ազգերի կազմակերպության «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի իրագործմանն ուղղված շարունակական ջանքերը, որը ճանաչում է, որ շրջակա միջավայրի համարժեք պաշտպանությունը կարևոր է մարդկանց բարեկեցության և հիմնարար մարդու իրավունքներից օգտվելու համար,

համաձայնելով, որ ոստիկանության ոլորտում բարեփոխումների զգալի առաջխաղացումը խթանող հիմնական բաղկացուցիչներից են կրթական բարեփոխումները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Կողմերը կնպաստեն բոլոր ուսումնական հաստատություններում մարդու իրավունքների մասին կրթության կազմակերպմանը հիմնված՝ հանդուրժողականության և մասնակցային մոտեցման խթանման և ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաների վրա:

2. Կողմերը կհամագործակցեն ֆորմալ եւ ոչ-ֆորմալ կրթության ոլորտներում մարդու իրավունքների արդյունավետ կրթական ծրագրերի և դասընթացների նախագծման շուրջ՝ հետևելով Մարդու իրավունքների կրթության համաշխարհային ծրագրի առաջարկություններին:

3. Կողմերը միջոցներ կձեռնարկեն մարդու իրավունքների կրթության եւ վերապատրաստման որակը բարելավելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում կարիքների անկախ գնահատում անցկացնելու, փորձագիտական աջակցություն տրամադրելու և հնարավորությունների հզորացման գործողություններ իրականացնելու միջոցով:

4. Ի կատարումն 1989թ. Վիեննայի փաստաթղթում սահմանված պարտավորությունների, Նախարարությունը կխրախուսի, իսկ Գրասենյակը կաջակցի ԵԱՀԿ Հելսինկյան վերջնական ակտի ամբողջական ընդգրկմանը դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում:

Հոդված 2

Կողմերը կհամագործակցեն հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում նորաստեղծ հասարակական դիտորդական խմբի մասնագիտական հմտությունների զարգացման հարցում՝ կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ եւ աշխատանքային հանդիպումներ, ուսումնական այցեր եւ այլ գործողություններ:

Հոդված 3

Կողմերը կհամագործակցեն հնարավորությունների սահմաններում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար երաշխավորելու իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ:

Հոդված 4

Կողմերը կհամագործակցեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթական բարեփոխումներին օժանդակելու համար, տրամադրելով իրենց հմտությունը, մասնագիտական աջակցությունը եւ փորձագիտական գիտելիքները վերոհիշյալ ոլորտում, ինչպես նաև կխթանեն «ոստիկանի» մասնագիտության ձեւավորմանը:

Հոդված 5

Կրթության որակն առավել բարձրացնելու նպատակով Կողմերը կհամագործակցեն՝ Հայաստանում ժողովրդավարական եւ ուսանողների ավելի լայն ընդգրկում ունեցող ներկայացուցչական մարմինները հզորացնելու համար, ինչպես նաև կիրականացնեն բուհերում թափանցիկությունը խթանող գործունեություն:

Հոդված 6

1. Կողմերը կաջակցեն էկոլոգիական կրթության և առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքի մասին իրազեկության բարձրացմանը՝ մասնագետների վերապատրաստման և կրթական նյութերի և դասագրքերի բարելավման և մշակման միջոցով, և կխթանեն դրանց ընդգրկումը ուսումնական հաստատությունների համապատասխան կրթական ծրագրերում՝ որպես դրանց անբաժանելի մաս:

2. Կողմերը կհամագործակցեն ուսումնական հաստատություններին բնապահպանական հարցերի վերաբերյալ փորձագիտական աջակցություն տրամադրելու շուրջ:

Հոդված 7

Իր ունեցած ռեսուրսների շրջանակներում՝ Գրասենյակը Նախարարությանը կտրամադրի ԵԱՀԿ-ի կողմից տպագրված՝ տարածման համար նախատեսված նյութեր:

Հոդված 8

Սույն հուշագիրը չի բացառում Կողմերի միջև այլ համագործակցություն և աջակցություն և Նախարարության խնդրանքով՝ Գրասենյակը պատրաստ է տրամադրելու ցանկացած այլ տեսակի օժանդակություն իր մանդատի և ունեցած ռեսուրսների շրջանակներում:

Հոդված 9

1. Գրասենյակը կհամաձայնեցնի տրամադրվող աջակցությունը Նախարարության հետ՝ խուսափելու միջոցների օգտագործման ընթացքում մասնակի հասմընկնումներից, կրկնությունից և անարդյունավետությունից:

2. Նախարարությունը իր կողմից կտեղեկացնի ԵԱՀԿ-ին այլ գործընկերների հետ ունեցած համագործակցության և Նախարարությանը տրամադրվող աջակցության մասին, որոնք առնչվում են սույն Հուշագրի առարկային:

Հոդված 10

Սույն Հուշագրի մեկնաբանությունից, կիրարկումից և (կամ) կիրառումից ի հայտ եկած բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ պահանջները կկարգավորվեն Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 11

Սույն Հուշագրում պարունակվող կամ դրան առնչվող ոչինչ չպետք է համարվի ԵԱՀԿ-ի և/կամ նրա աշխատակիցների արտոնություններից կամ անձեռնմխելիությունից հրաժարում:

Հոդված 12

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Հուշագրի 13-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն և կազմում են դրա անբաժանելի մասը:

Հոդված 13

1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու օրվանից և ուժի մեջ կմնա այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը մյուսին գրավոր չի ծանուցել այն դադարեցնելու իր մտադրության մասին:

2. Դադարեցումը ուժի մեջ կմտնի ծանուցումը ստանալու օրվանից 90 օր անց:

Հոդված 14

Սույն Հուշագիրը ստորագրվել է Երևան քաղաքում 2010 թվականի դեկտեմբերի 6-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կողմից՝	**ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կողմից՝**
պրն. Երմեն Աշոտյան	**դեսպան Սերգեյ Կապինոս**
Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարար	**ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար**